ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 13 - Ա
26 հունվարի 2015 թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ

1. 2014 թվականի համայնքային բյուջեների հողի հարկի հավաքագրումը 100o/o ից ցածր ապահոված համայնքներում պատճառները և հողի հարկի գանձման համար նախատեսված բլանկների օգտագործման ճշտությունը ուսումնասիրելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Աղեկյան Ալբերտ - մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, խմբի ղեկավար

Սարգսյան Նելսոն - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

Առաքելյան Ռաֆիկ - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի աշխատանքներին ներգրավել մարզպետարանի աշխատակազմի հողօգտագործման և հողաշինարարության բաժնի մասնագետներին:

2. Աշխատանքային խմբին՝ **սեղմ ժամկետում** ուսումնասիրության արդյունքները ներկայացնել մարզպետին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ